



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Անասնապահության զարգացումը Սյունիքի մարզում – փուլ III

Swiss Cooperation Office
South Caucasus



Ծրագրի անվանումը

Անասնապահության զարգացումը Սյունիքի մարզում – փուլ III

Ընդհանուր տեղեկություններ

Մարզը. Սյունիք (Հայաստան)
Տևողությունը. 2011 թ. Սպեմբերի 01-ից մինչև 2014 թ. օգոստոսի 31-ը
Բյուջեն. 3'995'000 շվեյցարական ֆրանկ

Ծրագրի գործընկերները

- Իրականացնող գործընկերը. “Ռազմավարական զարգացման գործակալություն” ՀԿ
- Ինստիտուցիոնալ գործընկերը. ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը, ՀՀ Սյունիքի մարզպետարանը

Ծրագրի նպատակները

Ծրագրի ընդհանուր նպատակն է ուժեղացնել անասնապահության ոլորտը Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններում և ավելացնել ֆերմերների եկամուտները թիրախային համայնքներում: Սպասվում է, որ Ծրագրի ավարտին թիրախային համայնքների 7'000 տնային տնտեսություններից առնվազն 50%-ը կավելացնեն իրենց եկամուտները նվազագույնը 25%-ով՝ համեմատած ելակետային հետազոտության տվյալների հետ:

Նախապատմությունը

Գյուղատնտեսությունը համարվում է Հայաստանի տնտեսության ամենակարևոր ոլորտներից մեկը և աշխատանքով է ապահովում երկրի բնակչության գրեթե 40%-ին: Հայ ֆերմերները համարվում են բնակչության ամենաանբարենպաստ և խոցելի խումբը, որոնց գրեթե կեսն ապրում է աղքատության մեջ: Սյունիքի մարզը՝ համարվում է Հայաստանի ամենաաղքատ մարզերից մեկը՝ իր ծայրահեղ հեռավորության, վատ ճանապարհների և անբարենպաստ կլիմայական պայմանների պատճառով: Սյունիքի մարզի գյուղերի ֆերմերները հիմնականում վարում են բնամթերային գյուղատնտեսություն և դեպի շուկաներն ունեն սահմանափակ հասանելիություն: Գյուղատնտեսությունը, մասնավորապես անասնաբուծությունն ու ցածրարժեք հացահատիկային կուլտուրաների և կարտոֆիլի մշակությունը, և սննդամթերքի վերամշակումը միշտ էլ եղել են այս տարածաշրջանի հիմնական տնտեսական հիմքը: Մասնատված փոքր ֆերմերային տնտեսությունները գերիշխում են գյուղատնտեսական արտադրության մեջ, որն իր բացասական ազդեցությունն է ունենում արտադրանքի ծավալների և որակի վրա, ինչն էլ, հետևաբար, սահմանափակում է շուկայական հնարավորությունները: Ինչպես որ Հայաստանի, այնպես էլ Սյունիքի մարզի համար, գյուղատնտեսության ոլորտի երկու ամենակարևոր խնդիրներն են ցածր արդյունավետությունը և դեպի շուկաներ սահմանափակ

¹ Սյունիքի մարզն ընդգրկում է չորս տարածաշրջաններ՝ Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրիի տարածաշրջանները:

հասանելիությունը:

Ծրագիրն ամբողջովին համահունչ է Հայաստանի Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությանը, որի նպատակն է աջակցել գյուղատնտեսական արտադրության ավելացմանը և ավելի եկամտաբեր մշակաբույսերի խթանմանը, նպաստել խորհրդատվական ծառայություններից օգտվելուն և արտադրական ու վերամշակման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, և օժանդակել արտադրողների ու վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների ձևավորմանը: Ինչպես նշված է նաև Կայուն զարգացման ծրագրում, կառավարության հիմնական առաջնահերթություններն են ընտրված տարածաշրջանը և աջակցությունը այդ տարածաշրջանի տնտեսական զարգացմանը:

Ծրագրի գործողությունները

Ծրագիրը որոշակի վերապատրաստման և խորհրդատվական ծառայություններ է տրամադրում տարբեր շահակիցներին, որոնք ներգրավված են անասնապահության ոլորտում (կաթի վերամշակողներ, անասնաբույժներ, անհրաժեշտ նյութեր և պարագաներ մատակարարողներ և այլն): Ծրագրի վերջնական շահառուները Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների մոտ 7'000 ֆերմերներ են/փոքր տնային տնտեսություններ (մոտ 30'000 բնակչություն):

Սույն ծրագրի շրջանակներում նախատեսված ծրագրային գործողություններն են.

1. *Կաթի շուկայի հասանելիության ապահովումը*
2. *Մսի շուկայի հասանելիության ապահովումը*
3. *Ֆերմերային աջակցության ծառայությունների և անհրաժեշտ նյութերի ու պարագաների հասանելիության ապահովումը*
4. *Ֆերմերների կարողությունների ու հմտությունների բարելավումը*
5. *Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների ուժեղացում՝ գյուղական համայնքների տնտեսական զարգացմանն աջակցելու համար*

Ծրագրի արդյունքները

Ծրագրի III փուլի վերջում սպասվող վերջնարդյունքներն են.

Ա. Կաթի շուկայի հասանելիությունը. Նվազագույնը թվով 1'400 ֆերմերներ կայուն հատկանիշներով և քանակությամբ կաթ են մատակարարում և իրենց արտադրանքի համար ունեն վստահելի շուկաներ: Նախատեսվում է, որ, որպես ծրագրի միջամտության արդյունք, կաթի ծավալները կաճեն 35%-ով:

Բ. Մսի շուկայի հասանելիությունը. Նվազագույնը թվով 800 ֆերմերներ կայուն հատկանիշներով և քանակությամբ միս են մատակարարում և իրենց արտադրանքի համար ունեն կայուն շուկաներ: Ծրագրի միջամտության արդյունքում վաճառվող մսի ծավալները կաճեն 25%-ով:

Գ. Ֆերմերային աջակցության ծառայությունների և ենթակառուցվածքների հասանելիությունը. 1. Առնվազն 4'500 ֆերմերներ բարելավվել են իրենց մուտքը դեպի համապատասխան օժանդակ գյուղատնտեսական ծառայություններ; 2.

Գյուղատնտեսական ծառայությունների, ինչպես նաև օժանդակ նյութերի և պարագաների ձեռք բերումն ավելացել է 25%-ով; 3. Խոշոր եղջերավոր անասունների որակը (հաշվի առնելով գենետիկան, արտադրողականությունը և այլն) բարելավվել է; 4. Թարմ կաթի և մսի արտադրողականությունն ու ծավալները աճել են (կաթը՝ 15%-ով, միսը՝ 20%-ով):

Դ. Կարողությունների և հմտությունների զարգացում. Առնվազն 1'400 ֆերմերներ, ֆերմերային տնտեսության կառավարման և բիզնեսի պլանավորման բարելավված կարողությունների միջոցով, կատարելագործել են իրենց ֆերմերային տնտեսություն վարելու պրակտիկան:

Ե. Անասնապահության ոլորտի զարգացման մեջ տեղական իշխանությունների առաջընթացը. 1. Տեղական իշխանությունները նպաստավոր և արդյունավետ դեր են խաղում անասնապահության ոլորտում՝ հիմնվելով իրենց պարտականությունների վրա՝ ազգային օրենսդրությանը համապատասխան (օրինակ՝ տվյալների կառավարումը, արոտների կառավարումը, աղետների վերահսկումը); 2. Գյուղական արտադրողները, համայնքներն ու տեղական իշխանությունները գյուղական տնտեսական զարգացման գործընթացներում արտացոլում են աղետների ռիսկերի նվազեցման սկզբունքները և բնապահպանական գործոնները:



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Cooperation Office

Swiss Cooperation Office South Caucasus
Embassy of Switzerland

Melik-Adamyant Street 2/1, Yerevan, Armenia
Phone (+374 10) 52 40 88; (+374 10) 52 98 60
Fax: (+374 10) 52 98 61



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

**Swiss Cooperation Office
South Caucasus**

South Caucasus

Անասնապահության զարգացումը Սյունիքի մարզում – փուլ III

E-mail: yerevan@sdc.am
Web-page: www.swisscoop.am